## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 5

**«ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ի կարիքների համար համակարգչային և պատճենահանման սարքավորումների և օժանդակ նյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-17/06» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի /հայտերի բացման նիստի/**

**ք. Երևան**

**«01» նոյեմբերի 2017թ.**
**ժամը 12:00**

Մասնակցում էին՝

*հանձնաժողովի նախագահ՝*

**Ավետիք Ավագյան՝** (Գնման Պատասխանատու/Գնահատման հանձնաժողովի ղեկավար՝ ԳՊ/ԳՀՊ) ՀՀ Արագածոտնի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար,

*հանձնաժողովի անդամներ՝*

**Էդգար Տոնականյան՝** (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ) ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի աշխատակազմի ղեկավար,

**Կարեն Մելքոնյան՝** (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ) ՀՀ Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար,

**Արմինե Ալիխանյան՝** (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ) Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար,

*հանձնաժողովի քարտուղար՝*

**Արուս Խաչատրյան՝** (Գնման պատասխանատու /ընթացակարգի համակարգող՝ ԳՊ/ՀԿ) ՀՀ դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման վարչության գնումների համակարգման բաժնի ավագ մասնագետ:

Նիստից բացակայում էր՝

**Աղավնի Բոտոյան՝** (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ) Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար:

1. **Տեղեկատվություն՝ ներկայացրած հայտերում արձանագրված անհամապատասխանությունները մասնակիցների կողմից շտկելու վերաբերյալ.**

«Էդվարդ Քոմփյութերս» ՍՊԸ-ն, «Կոմպմարկետ» ՍՊԸ-ն, «ՊԱՑՐՈՆ ՌՄ» ՍՊԸ-ն սահմանված կարգով և ժամկետում շտկել են հայտերում արձանագրված անհամապատասխանությունները:

**Հանձնաժողովը որոշեց.**

«Էդվարդ Քոմփյութերս» ՍՊԸ-ի, «Էլիպս Ջիէ» ՍՊԸ-ի, «Կոմպմարկետ» ՍՊԸ-ի, «ՊԱՑՐՈՆ ՌՄ» ՍՊԸ-ի, «Նորմա-պլյուս» ՍՊԸ-ի, «Էկոմիքս» ՍՊԸ-ի, «Վարմեքս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերը գնահատել բավարար:

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:*

2. 1-ին, 2-րդ, 5-րդ, 6-րդ չափաբաժինների մասով ոչ գնային պայմանները բավարարող գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների ներկայացված գնային առաջարկները գերազանցում են սույն ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների գնման համար նախատեսված գները, ինչով պայմանավորված անհրաժեշտություն է առաջանում առաջարկված գների նվազեցման նպատակով մասնակիցների հետ վարելու միաժամանակյա բանակցություններ՝ ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշման <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն:

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:*

Հանձնաժողովը որոշեց.

-Նիստը կասեցնել և բանակցությունները վարելու նպատակով հաջորդ նիստը հրավիրել 2017թ. նոյեմբերի 07-ին՝ ժամը 12:00-ին, <<ՀՀ դատական դեպարտամենտ>> ՊՈԱԿ-ի վարչական շենքում (ք. Երևան, Վ. Սարգսյան 5):

*Ընդունվել է որոշում. կողմ 4, դեմ 0:*

Հանձնաժողովի նիստը

Հանձնաժողովի

Նախագահ՝ Ավետիք Ավագյան

Անդամներ՝ Էդգար Տոնականյան

Կարեն Մեջրոյան

Արմեն Ալիխանյան

Քարտուղար՝ Արուս Խաչատրյան